ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «14» սեպտեմբերի 2012 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 20-Ա/Ք

«ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2012»
ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 849-Ա/Ք հրամանը, «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2012» մրցույթը պատշաճ կազմակերպելու համար

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Գ. Մելիքսեթյան)՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) և հրավերի փաթեթի զետեղումը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայք:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Լ. Մարդոյան)՝

1) 45 օրացուցային օրվա ընթացքում ապահովել մրցույթի հայտերի ընդունումը և հաշվառումը,

2) մրցույթի հայտ ներկայացրած ասպիրանտների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,

3) 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել հայտերի տեխնիկական ստուգումը և դրանց տրամադրումը փորձագիտական մասնագիտական խորհուրդներին,

4) 30 օրացուցային օրվա ընթացքում ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության իրականացումը,

5) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել գիտական փորձաքննության արդյունքները, դրանք ներկայացնել փորձագիտական մասնագիտական խորհուրդներին,

6) 10 աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով տեղեկացնել գիտական թեմաների ղեկավարներին,

7) մինչև 2013 թ. հունվարի 25-ը կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Վ. Գսպոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ